ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-1550 «31» 01 2020թ.

«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ
«ԱՐՄ ԼՅՈՒՔՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Հ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ՄԱՐԳԱՐՅԱՆ 45, 105

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն մասնակի միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի՝ իրավահաջորդ «Արմ Լյուքս» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) միջև 01.11.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/188» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով», որի վերջնաժամկետը լրացել է 15.12.2019 թվականին և Ընկերությունը հավուր պատշաճի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որի դիմաց վճարվել է պայմանագրային գումարի հիսուն տոկոսը՝ 5235000 (հինգ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129